ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԻՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ, Փ/Ծ ԳՆԴԱՊԵՏ ԱՐՏԱԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ՝ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը
   - Արտակ Նահապետյան
2. Զբաղեցրած պաշտոնը
   - ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության տնօրեն
3. Գործուղման վայրը և ժամկետները
   - Բելառուսի Հանրապետություն, ք. Մինսկ, 2018 թվականի հուլիսի 19-ից 21-ը
4. Հրավիրող կողմը
   - ԱՊՀ Բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների հարցերով միջպետական խորհուրդ
5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

   1Մասնակցություն բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների վերացման ոլորտին առնչվող ԱՊՀ Միջպետական խորհրդի 31-րդ նիստին
6. Քննարկված թեմաները
   - Բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման գործունեության արդի հիմնահարցերի քննարկում
   - 2017-2018թթ. Բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման միջպետական խորհրդի գործունեության և հետագա համագործակցության կատարելագործմանն ուղղված միջոցառումների քննարկում
   - Բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների հարցերով միջպետական խորհրդի 2018-2019թթ. հիմնական միջոցառումների պլանի նախագծի մշակում
7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը
   - Այցելություն Քաղաքացիական պաշտպանության համալսարան, որտեղ ներկայացվել է

տեխնիկան, կրթական և գիտական հաստատությունները

- Մասնակցություն Բելառուսի Հանրապետության հրդեհային ծառայության 165-ամյակին նվիրված միջոցառմանը

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը
   - Ստորագրվել է բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների վերացման ոլորտին առնչվող ԱՊՀ Միջպետական խորհրդի 31-րդ որոշումը, որը դիվանագիտական ուղիներով կփոխանցվի հայկական կողմին (Որոշման Նախագիծը կցվում է)
   - Որոշում է կայացվել բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների վերացման ոլորտին առնչվող ԱՊՀ Միջպետական խորհրդի 31-րդ նիստին նախագահողի ընտրության համար
9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները
   - Նիստի ընթացքում քննարկվել են ԱՊՀ Բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների հարցերով միջպետական խորհրդի 2020թ. և 2021թ. նիստերի անցկացման հետ կապված հարցեր, դրանք համապատասխանաբար Ղրղստանի և Տաջիկստանի Հանրապետություններում անցկացնելու մասին: Առաջարկում եմ վերջիններիս կողմից հրաժարվելու դեպքում վերանայել հնարավորությունը՝ վերը նշված նիստերից որևէ մեկը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու համար
   - Առաջարկում եմ ուսումնասիրել բելառուսական կողմի ուսուցանելու առաջարկը՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ոլորտում ԱՊՀ անդամ-պետությունների կադրերի վերապատրաստման կազմակերպման ընթացքում
10. Գործուղվողը
    - ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գնդապետ Արտակ Նահապետյան
11. Ստորագրությունը, ամսաթիվը
    - 30.07.2018թ.